


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԱՐ

Նամակ կամ ուր եւ կ գրուիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տեղին. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ծաւակ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութիւնն
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

“ԱՐԱՐԱՏ, Ը

Ռուսական քանի մը հայատեաց թերթե-
րու սխիւթեմական յարձակումները Կովկասի
հայ ազգաբնակչութեան նկատմամբ, — որոնց
դէմ լուռ չի մնար սակայն թիֆլիզի մամուլը, —
ու մասնաւորապէս էջմիածնի նկատմամբ թըշ-
նամալից հրատարակութիւններն իրենց առա-
ջին “պտուղները” տալ կը սկսին : Ամենայն
հայոց հայրապետութիւնը իր աւանդական ի-
րաւասութիւններէն մէկը կը կորսնցունէ : Մայր
Աթոռի պաշտօնաթերթը, Արարատ, որ իր
հրատարակութեան առաջին օրէն ազատ էր
գրաքննութեան խստութիւններէն ու կոչկան-
դումներէն, այսուհետեւ պիտի ենթարկուի
ցենզուրայի օրէնքին :

Ներքին գործոց նախարարին “ամենա-
հպատակ զեկուցման վրայ” Թագաւոր-Կայսրը
“ամենաողորմածաւար” հրամայեց է Արարատ
ամագիրը ենթարկել ցենզուրական օրէնքի :
Այս անակնկալ տնօրինութիւն Կովկասի կա-
ռավարչապետին կողմէ գրաւորապէս հաղոր-
դուած է էջմիածին : Վեհափառ Կաթողիկո-
սը պատասխանատու գրաքննիչը պիտի ներ-
կայացունէ կառավարչութեան թերթին կրօ-
նական բաժնին համար, իսկ ամբողջութիւնը
թիֆլիզ գրաքննիչին ղրկելու պարտաւոր պի-
տի ըլլայ :

Այս կերպով, Արարատը կը դադրի բա-
ցառիկ առաւելութիւն մը վայելելէ իբրեւ
օւկան էջմիածնի միաբանութեան, ու կը վե-
րածուի որ և է անհատի հրատարակած լրա-
գրի մը պայմաններուն :

Աւելագոր հայրապետը, Խրիմեան Հայրիկ,
արդէն իսկ ի խոր խոցուած ազգին աղէտնե-
րէն, նոր ցաւ մըն ալ աւելցած կը տեսնէ իր
սրտին՝ կաթողիկոսական իրաւասութեան տըր-
ուած այս հարուածէն, որ թէեւ առ երեւոյթս
աննշան, բայց իր չարագուշակ նշանակութիւնն
ունի : Կը ցուցունէ վստահութեան պակասու-
թիւն մը կառավարչութեան կողմէ, արդիւնք
քանի մը ռուս թերթերու նենգամիտ հրա-
տարակութիւններուն, և էջմիածնի բարոյական
նշանակութիւնը տկարացնելու տրամադրու-
թիւն մը՝ հետեւանք միջազգային հանրածա-
նօթ քաղաքականութեան :

Անկեղծապէս խօսելով, այն ցաւը զոր
պիտի զգայ ամեն հայ Արարատին կրելիք սեղ-
մունքներէն, անհամեմատ կերպով մեծ է այն

համակրանքէն զոր կը զգար էջմիածնի պաշ-
տօնաթերթին նկատմամբ, երբ ազատ հա-
մարձակ կը հրատարակուէր այն : որովհետեւ,
չատ մը իրաւասութիւններու պէս, այն ատեն
միայն իրար կանցնիւք ու ճանչնալ կուզէիք
բանի մը յարգը երբ ձեռքէ կը հանենք զայն :
Այլքէ անցուցէք վերջին տասնեակ տարիներու
անցքերը, ու պիտի տեսնէք թէ այսօր ո՞ր-
քան զրկուած ենք հանրային կեանքի համե-
մատապէս լայն պայմաններէ, հաւաքուելու,
խօսելու, գրելու, մեր ներքին գործերը մա-
տակարարելու գիւրութիւններէ որոնք նեղ
կուգային մեզի երբեմն Պոլսոյ մէջ, օրինակի
համար, լրագրութիւնը ենթարկուեցաւ խըս-
տութիւններու որոնց վրայ գաղափար չ’ունէր
քառորդ դար առաջուան սերունդը : Կովկասի
մէջ, թէեւ ցենզուրան գոյութիւն ունեցած է
միշտ, բայց հոն ալ չընթանալը նեղցաւ : ու
գրաքննիչին կարմիր մատիտը ու հատուկ կրատը
կը կարկառուի յանկարծ մինչեւ Արարատի
նուիրական էջերուն :

Ո՞վ կը զբաղէր սակայն ասկից առաջ
այդ կրօնական թերթով : Եգիպտոսի մէջ,
օրինակի համար, կարծենք հազիւ օրինակ մը
կը ստացուի, այն ալ Առաջնորդարանը :

Ունեցածնուս յարգը գիտնանք գտնէ : ու
փոխանակ զիրար բզկտելու, զիրար կործանել
աշխատելու, ուժ տանք գրչի ու մտքի այն
ամեն վաստակներուն որոնք ցանուցիր կը կա-
տարուին քիչ շատ ազատ միջավայրերու մէջ :

ԱՅԺՄԷՆՈՒԹԻՒՆ

Եւրոպական վերջին Ստրասնիցայի քե-
րաւ յար մը զոր ոչ միայն հեռագիրը չէր
հաղորդած, այլ եւ գերմանական ու աւս-
րիական քերթերը, որոնք ամենեւնի անշի
գրադէրու էին անով, չեն յիշատակեր : Այս
յոռաբանը կրնայ մեկնուիլ կա՛մ իբրեւ ան-
վրասահութիւն մը դէպքին ստուգութեանը
վրայ եւ կամ քաւճարագոյն հրահանգի մը
հնազանդութիւն : Երկու միակ անգագնա-
պահ յրագիրներն եղած են Վիեննայի Ռայխ-
վէհէնը ու ժրանսական Բաղրիւն, որոնց սե-
ղեկութիւններուն նայելով՝ Բեշթայի մէջ
attentat մը եղեր է այն միջոցին երբ ժրանս
Եօգէմ Կայսրը երկարուող կայսրանը կեր-
բար Վիլհելմ կայսրը դիմաւորելու : Վերա-
պահումով կարծեսպէս դէպքին պատմու-
թիւնը, իբրեւ հետաքրքրական ինչ :

Ռայխվէհէնի խօսքին նայելով, Աւս-
րիոյ կայսեր կառքէն ոչ շատ հեռի պայքիւն
մը շուրէր ու ծուխ նշմարուէր է : Կայս-
րը, գունատ, ոսկի եղջերով, “մի՛ մօտենա՛”
գոչեր է : Բանի մը հոգի փորձեր են զինուո-
րական շղթան խզել : շփոթութեան մէջսեղ
ոստիկանութիւնը Բանի մը ձեռքակալու-
թիւններ կատարէր է :

Իսկ Բաղրիւն Բեշթայէն ստացած քղ-
րակցութիւնը տարբեր կերպով ու աւելի
մանրամասն կը պատմէ եղբորութիւնը :

Երկու կայսրերը նոր նստած էին կառքին մէջ
և կը պատրաստուէին մեկնիլ կայսրանէն, երբ բազ-
մութիւնը իրար անցաւ ստատիկ պայթիւն մը լսելով :
Միեւնոյն ատեն, թանձր ծուխ մը և փոշի ամպ մը
նշմարուեցաւ : Կայսրանի շէնքերուն ետեւէն, բաւա-
կան բարձրութեամբ, Հետաքրքիրներու բազմութիւնը
տակն ու վրայ եղաւ ու խզեց զինուորական ու
ոստիկանական շղթան :

Վիլհելմի մէջ, երկու կայսրերուն հեծած կառ-
քը շրջապատուեցաւ ահաբեկ անձերէ որոնք տան
արգելք կը խորտակէին՝ փախչելու համար : Վատրիոյ
կայսրը, յուզուած, ոտքի ելաւ ու ձեռքով նշան
ըրաւ ներքիններուն՝ զսնտիւր ապահովելու համար :
միեւնոյն ատեն բարձրագոյն հրամայելով ոստիկա-
նութեան որ ժողովուրդը ետ մղեն :

Իշխանութիւնը մեծ ջանքեր ըրին դէպքը ծած-
կելու համար : Առաջին վայրկեանէն խիստ հսկողու-
թիւն դրուեցաւ բոլոր հեռագիրներուն վրայ : Լրա-
գիրներն հրաման ստացան բան չի գրել : Հա-
կառակ ոստիկանութեան պահած լուռութեան, կը
կարծուի թէ պայթուցիկ մեքենայ մը պատրաստուած
էր օդը հանելու համար այն կառավարմամբ որով կը
ձամբորդէր Վիլհելմ Բ. միայն թէ ուշ պայթել է :

Կը յիշուի թէ այս կարգի փորձ մըն ալ Գերմանիոյ
մէջ եղաւ վերջերս, Հոմպուրկի տեսակցութենէն
քիչ առաջ : Կենթադրուի թէ առաջին փորձին հե-
ղինակներն են որոնք աշխատած են Բեշթայի մէջ :

Ռայխվէհէնի այն քիւր, որ կրպարումնա-
կեր այս դէպքին շուրջ, գրաւուէր է Վիեննայի
ոստիկանութեան կողմէ :

Կառեցուի այս առթիւ, թէ Ասշեր եւ
Բերնսպորտէր աւստրիացի ընկերվարական
երկու պետեր, որոնք Բեշթայ կերպային ուր
ընկերվարական մեծ միջոցի մը պիտի գո-
ւարդուէր, ոստիկանութեան կողմէ հրաւիր-
ուէր են Վիեննա դառնալ : Աւստրիոյ ու Գեր-
մանիոյ քերթերը այս վերջին պարագայէն
գաւ ոչ մեկ յիշատակութիւն չեն պարու-
նակեր :

* *

Բեդրայուրկէն սեպտեմբեր 29 քուակիր
Ռիպերի հեռագրի մը նայելով՝ ռուս ոստի-
կանութիւնը ի դերեւ հաներ է Զարին կե-
նաց դեմ դաւադրութիւն մը, անոր այցելու-

քեան միջոցին ի Վարչախա: Գերմանացի ընկերակցականներ Վարչախայի գլխաւոր փողոցին տակ ականներ քսցած էին. քայց վախճալով որ փողոցում մը առաջ չի գայ, որմնադիրներ կանչել տուին յեկամաններ հաստատելու համար. առնիք իմաց տուին ուսկիանութեան: Հարիւր քսան հոգի մերթա-կաշուած են:

Ք Ր Օ Ն Ի Կ

Ք Ա Ս Ր Ս Վ Ա Ր Տ

Մատամ Ռիկո, ծնեալ Գլարա Վարտ, և անցո-ղաբար տը Գարաման Շիմէ իշխանուհի, երեսունի մօտ, խարտեաշ մագերով, ժպտուն չրթներով, սի-րանդիւր աչերով, ոչ դեր ոչ նիհար, շնորհալի կին մըն է որ դմեզ ընդունելու պատիւն ըրաւ. երէկ Օ-թէլ Դէփըրտի 43 թիւ սենեակին մէջ:

Հախ ձեզի ուրուագիծ մը այդ կնկան փոթոր-կալից կեանքէն:

Ամերիկեան միլիոնատէրի մը աղջիկն է Գլարա Վարտ որ այս պահուս քնչուի մը ընկերակցութեամբ իր վիպային սէրը կը պտըտոյնէ աշխարհիս մէկ ծայրէն միւսը, տարբեր միջոցներով տակ անոր տուած հեշտանքին պէսպիսութիւնը վայելելու համար:

Քսան տարու եղած ատենը իր ազնուապետա-կան ձգտումներուն յազուրդ տալու համար, ամուս-նացաւ Պէճիգայի Բրէնս տը Գարաման Շիմէյի հետ, որ իր անունէն զատ հնչուն բան մը չունէր, բայց Միս Գլարա այդ պակասը կը լրացնէր հետը բերած միլիոններով:

Այդ ամուսնութեամբ զբամը և ազնուականու-թիւնը իրար կը միանային տալու համար այդ նորա-պսակ ամուսին աշխարհիս գերագոյններէն թիւնը:

Տասը տարի տեւեց այդ կեանքը: Բայց օր մը յանկարծ իշխանուհին աներեւութացաւ և երբ ա-մուսինը խեղագար, ասղին անդին կը փնտռէր, մեր հերոսուհին քնչու ջուրկապարի մը, Ռիկոյի հետ, սիրոյ դաշնակին ամրոջ ստեղծաշարը շաշարած և լմնցուցած էին արդէն:

Գալթակզական այս առեւտնագումին հետեւանքը եղաւ ամուսնալուծութիւն և այսօր Գլարա Վարտ Ռիկոյի օրինաւոր կինն է . . . ցնոր տնօրինութիւն, իրրեւ ամերիկայի կնկան տիպար՝ միշտ Հոմ Սթուլի վարժուհիները ունեցած եմ աչքիս առջեւ, աւշային արարածներ, բարակ, թեթեւոտ, Ասո-ուածաշունչի ընթերցմամբ նիհարցած, չէկի մօտե-ցող խարտեաշ մագերով. որոնք եթէ իրենց յատուկ ձայնի և ձեռքի փափկութիւնը չունենային պիտի կարծէիր թէ մանչեր են չրջագգեստի մը մէջ պահ-ուրտած. անխօս աչեր ունին անոնք և շարունակ կապոյտ չրթներ. իտէլական կիներ, եթէ կուզէր, բայց զրկելու չալտի համարձակէիք վախճալով որ չի կոտրես չուշանի այդ ձողերը, այնքան թարմ, այնքան նուրբ են անոնք:

Ես Հոմ Սթուլի ամերիկայի վարժուհիները նը-կատած եմ իրրեւ հրեշտակներ en tourné d'ins-pection այս ցած հողագնդին վրայ, բայց իրրեւ կին՝ երբէ՛ք:

Տկար և գեղեցիկ սեռին պատկանող արարած-ները Եւայի աղջիկը ըլլալին ապացուցանելու հա-մար պէտք է, ըստ իս, անխարկը հրաւիրող կուրծք մը ունենան՝ այս բառին կըր իմաստով, վզին տակ և իրունին վերեւ: Միմակ ամերիկուհիներն են որ սահարայի պէս տափարակ կուրծք մը ունին: Հա-կոտնեայ այդ աշխարհէն տասը, քսան, հարիւր միլիոններ ունեցողներ շատ կան, բայց զոյգ մը մարդու պէս այդ բնական ալիպրոններէն ունեցող զեւ չէ տրուած ինձ տեսնել:

Բազդի խնդիր է գուցէ ասիկայ: Բարեբաղդա-բար, Տը Շիմէ իշխանուհին իր անորժարեք կիսա-գունտերով կը ջրէ . . . իմ յուստեւ համոզումներս:

Այցաբարտս ի ձեռնի գիւտաւորեց զիս:

Ճերմակ crêpe de chiné սենեկագգեստ մը հազած էր գեղանի հիւրընկալուհիս: Ուսերն ի վար ծածանող ոսկեգոյն հիւսքը Կէօթէի Մարկիթիին անմեղութիւնը պիտի տար իր դէմքին, եթէ զոյգ մը հրացայտ և սպաննիչ աչեր հակառակը մտածելու չիստիպէին երբեմնի բրէնէսին հետ խօսողը:

Ամերիկեան հուժկու շէյֆ-հիսնով սկսաւ մեր խօսակցութիւնը:

—Առաջին անգամն է որ հայ մը տեսնելու պա-տիւր կուենամ, ըսաւ լաւ հնչուած ֆրանսե-րէնով մը:

—Ես ալ առաջին անգամն է որ ձեզ պէս դե-ղեցիկ կին մը տեսնելու կարժանանամ, պատասխա-նեցի:

—Օ՛հ, դուք, հրապարակագիրներդ, ամենքդ միենոյն էք:

—Իսկ դուք, տիկին, ո՛չ ուրիշի մը պէս:

—Pas de compliments, voyons! Դուք ա-ռաջինը եղաք ձեր պաշտօնակիցներուն մէջ որ զիս տեսնելու գալու պատիւը ըրիք ինծի: Շնորհակալու-թիւն:

—Եւ հաւատացէ՛ք որ վերջինը չեմ ձեր պատ-մութիւնովը հետաքրքրուողներուն:

—Ա՛խ, այդ պատմութիւնը, այդ պատմութի՛ւ-նը. դո՞ւք ալ, պարոն:

—Անշուշտ կը ներէք որ ձեզ ըսեմ թէ մինչեւ այժմ մարդու պարտականութիւնն կատարեցի. չի-մա խմբագրի հետազոտութիւններս են որ կսկին, որոնց, խնդրեմ, ձեր շնորհալի ներողամտութիւնը նուրիշէիք: Ինչ որ եւրոպական լրագիրներուն մէջ կը կարդանք տարիէ մը ի վեր, ճշգրիտ կերպով կը պատ-կերացնեն ձեր հոգեկան վիճակը:

—Բոլորովին, պարոն, բոլորովին: Եւ վերջա-պէս լրագիրները ի՞նչ ըսին ինծի համար: «Կին մը որ ձանձրացած իր տարիքոտ էրկանը անհարբեաւ-թեմէն, անոր թեւերէն խոյս տուաւ մարդու մը հետ, որուն բազուկներուն մէջ աւելի տաք էր սէրը և կեանքը աւելի քաղցր»: Ի՞նչ ընէի, պարոն, երբ նուրիշը կազդէր ինծի ամուսինս, որուն հետ կե-նակցութիւնը պզտիկ դժուր մըն էր ինծի համար: Շատեր կըսեն թէ, ընտրութիւնս միայն լաւ չէր, և թէ Ռիկոյին աւելի լաւ ընկերակցան վիճակ ունե-ցող մը կրնայի ընտրել»: Ի՞նչ պարտաւ խօսք. ինծի համար, պարոն, էրիկ մարդիկ իրարմէ շատ չեն տար-բերիր: Մտէ և ոսկորէ մեքենաներ են որոնք կը շար-ժին, կուտեն, կը խմեն, կը ծխեն և կը հայհոյեն, voilà tout.՝ Իրաւ է որ կան իրարմէ աւելի կամ նուազ կրթեալ կամ աղքատ մարդիկ, այս ալ ջղային զրու-թեանէն կախում ունի, և չիզերու գալով, պարոն, արդի ամուսինս, Ռիկո, տասը հատ բրէնս կարծէ: Անշուշտ կը հասկնաք:

—Թերեւս պէտք եղածէն աւելի, տիկին:

—A la bonne heure՝ արդ պէտք է աւելցը-նեմ թէ շատեր գտնուեցան որ զիս այսպէսեցին, ըն-տանիքս երես դարձուց, լրագիրները բանբասեցին զիս, կարծելով թէ իրենց ըսածները ապաւորու-թիւն մը կրնան ընել վրաս. allons donc՝

«Կնկան մը համար սէր պէտք է, և երբ կը զետ-նայ, աղկէ դուրս աշխարհ չկայ. ընկերութիւնը իր դռները պիտի գոյէ եղեր երեսիս, tant pis pour elle, ինծի համար, բաց օդը, կապոյտ երկինքը, ծառերու կանաչութիւնը, թռչուններուն ճուղղուը աւելի կը հմայեն քան թէ իշխանական սալօնի մը միջնորդը որուն մէջ ապրելու համար տասը տարի համբերութեամբ տապալուեցայ: Կեանքը հիւսկ կըզ-գամ կոր. աշխարհք իմ է, միայնածը, je m'en fiche:

Յապուշ կրթած մտիկ կընէի հիւթէրական այդ կնոջ գաղափարներուն. խօսած ժամանակը հետզհետէ գոյն կը փոխէր, մէկ աթոռէն միւսին վրայ կը ցատ-բէր, երբեմն ձեռքը կուրծքին վրայ կը դնէր՝ արտին բաբախումները կարծես զսպելու համար: Եւ այդ շարժման միջոցին թեւերուն ձեւակութեանը վրայ խիստ լաւ և խիստ զրգռիչ գաղափար մը կուտար ձեզի:

Չուզեցի աւելի երկար թափանցել իր գաղտ-նիքներուն մէջ և խօսքը փոխելով.

—Եգիպտոսը ի՞նչպէս կը գտնէք, հարցուցի:

—Հիանալի՝ պարզապէս, կը ցաւիմ որ շատ չափով կրնամ վայելել անոր գաղջ կիման, վաղը կը մեկնինք:

—Որո՞ւ հետ:

—Vous êtes méchant, monsieur, բայց, Ռի-կոյի հետ անշուշտ:

—A propos, պարոն Ռիկո ֆրանսերէն կը խօսի՞

—Օ՛հ, շատ քիչ, բայց բաւական՝ իր սէրը ինձ յայտնելու համար:

—Ամերիկայի և Եգիպտոսի մէջ ի՞նչ տարբե-րութիւն կը գտնէք:

—Օ՛հ, շատ, հոն մարդիկը ձերմակ են և է՛-

չերը սեւ, հոս մարդիկը սեւ են և էչերը ձերմակ, ա՛հա՛ տալաւորութիւնս:

—Վերջին հարցում մը, տիկին, եթէ կը ներէք:

—Կաղաչեմ:

—Ըսուեցաւ թէ երգչուհութեամբ պիտի ապրիք, իրա՞ւ է:

—Ինչո՞ւ չէ. այս դարուս մէջ երգչուհիները իշխանուհիներէն աւելի պատիւ կը վայելեն, այն-պէս չէ՛:

—Քանի որ դուք կըսէք, տիկին:

Երբ ոտքի ելնայ մեկնելու համար, թող տուաւ որ ձեռքը համբուրեմ, ինչ որ ամենայն փութիւ-տութեամբ կատարեցի. առաջին անգամն էր որ չըրթ-ներս կը դպցնէի հակոտնեայի մը ձեռքին:

Եւ մեկնեցայ. . . առանց Գլարա Վարտը տեսած ըլլալու: Ահա՛ ինչպէս կը գրուի ինթէրվիու մը:

Յ. Ա.

ԿԼԱՏԸՍԹՈՆԻ ԿԱՐԾԻՔԸ

«Մեծ ծերունին» եւրոպական համաձայ-նութեան նկատմամբ իր կարծիքը յայտնած է Տէյլի Գրօնիթին ուղղած նամակի մը մէջ, որ անոր հետեւեալ հատուածը միայն կը հրա-տարակէ:

«Արեւելեան խնդրոյն տեսակէտով վերջին երեք տարիներու մէջ առաջ եկած ցաւը, ա-մօթը ու դարչանքը՝ ո՛չ մէկ լեզուով կրնայ բացատրուիլ: Կացութիւնը կարելի է ամփոփել սապէս.

«1. Հարիւր հազար հայ ջարդուեցան, առանց ո՛ր և է ապահովութիւն ձեռք առ-նուելու ապագային համար, և միմիայն մար-դասպաններն օգտուեցան աղկէ:

«2. Թուրքիա այսօր աւելի զօրաւոր է քան ինչ որ չէ եղած Խրիմի պատերազմէն ի վեր:

«3. Յունաստան աւելի տկար է քան իր թագաւորութեան հաստատուելէն ի վեր ո՛ր և է ժամանակ:

«Այս ամենքը հետեւանք են եւրոպական համաձայնութեան, այսինքն այն անվտանգու-թեան ու անեղութեան զոր տէրութիւնները կը սնուցանեն իրարու նկատմամբ:»

Կ. ՊՈԼՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Սթանիսլասի Կ. Պոլսոյ լղթակիցը կը հա-ղորդէ սեպտ. 22 թուականաւ թէ հինգ հա-րիւր հայեր զէպի ներքին գաւառները զըր-կուեր են ընդ-հակողութեամբ:

—Կ. Պոլսէն, կէս-պաշտօնական աղբիւրէ հետեւեալը կը հաղորդեն Վիէնայի թեր-թի մը.

«Բաց ի ժէօն-թիւրք կուսակցութեան նախկին պետ Մուրատ պէյէ և եգիպտացի իշխանուհի Նազը հանըմէ, նոյն կուսակցու-թեան Բարիզի գօմիթէէն երեք անդամներ մայրաքաղաքս դարձան. ասոնք են՝ վախճան-եալ մեծ-եպարքոս Փուատ փաշայի եղբորոր-դին Հիլմէթ պէյ, զինուորական վարժարանի ֆրանսերէնի նախկին ուսուցիչ հազարապետ Ահմէտ պէյ և երբեմն մաքսային պաշտօնեայ Շէյքէթ էֆէնտի, Բարիզ: Լոնտոն և Չուի-ցերիա գտնուող ժէօն-թիւրքերու թիւը քսա-երեքի իջած է: Կ. Պոլսոյ մէջ կը յուսացուի որ անոնց ալ մեծագոյն մասը իրենց երկիրը դառ-նան և չորս հինգ հոգի միայն մնան որոնք կամ շատ կասկածելի նկատուած են և կամ արդէն հաստատուած են Բարիզ:»

Եգիպտոսի մէջ տարակոյս կը յայտնուի

Թէ նաղը հանրմ իշխանուն, որ Եւրոպա գացած էր այս տեղէն, Կ. Պոլիս վերագարած ըլլայ:

Վերել յիշուած ժէօն-թիւրքերուն մէջէն հաղարապետ Ահմէտ պէյի նկատմամբ կըսուի թէ Պէլլիատի օմմ. դեսպանատան ղինուորական կցորդ անուանուեր է:

—Թայմզին թղթակիցը կը հեռագրէ Կ. Պոլսէն.

«Յունաստանի պատերազմական տուգանքին ի հաշիւ Պանք Օթօմանի կողմէ մեծագուծ մար կանխավճար մը ըլլալու լուրը գոհունակութիւն կը պատճառէ այստեղ: Սըր Էտկար Վինսընդ առաջիկայ շաբթու Աթէնք պիտի երթայ՝ այդ փոխատուութեան ու երմտական քոնգրէի ինքզինքն զբաղելու համար: Սուլթանը կը վախնայ որ չըլլայ թէ Թեապոյոյ պարպուիլը թրքաց պատերազմատէր կուսակցութեան կողմէ ցոյց մը առաջ բերէ. այս պատճառաւ խստիւ արգիլուած է լրագիրներուն՝ ամենաթեթեւ ակնարկութիւն մը իսկ ընել անոր»:

Նոյն թղթակցին տեղեկութեանց նայելով, Սուլթանը կը դժկամակի եղեր վաւերացունել Կրէտէի վերաբերեալ այն առանձնաշնորհումները զորս անցեալ տարի խոստացաւ Տէրութիւններուն, առարկելով թէ չի կրնար երեսի վրայ ձգել կղզիին իսլամները ու քրիստոնեայ թշնամի մեծամասնութեան մը ձեռքը թողուլ զանոնք:

—Տեղական արար թերթեր կը ծանուցանեն թէ, օսմանեան ոստիկանութիւնը սկըսեր է քննութեան ենթարկել Սուրիա զըրկուած եգիպտական սուրհանդակը: Մէրսին և Պէրութ հասած բոլոր նամակները կը բացուին եղեր: Այս տնօրէնութիւն շարունակութիւնն է Կ. Պոլսէն տրուած այն հրամանին, որուն համեմատ երկրէն դուրս հանուեցան այն բոլոր եգիպտացիները որոնք գործով կամ օգտփոխութեան համար Սուրիա գացած էին:

—Հաւաս կը հեռագրէ Կ. Պոլսէն, թէ «Սուլթանը ինքնօրէն վարչութիւն շնորհեր է երուսաղէմի հապէշական եկեղեցիին»:

Եթէ չենք սխալիր, հապէշներն ալ, խպտիներուն պէս, մինչեւ ցարդ Հայոց Պատրիարքարանի իրաւասութեան տակ կը գտնուէին երուսաղէմի մէջ:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Եգիպտոսի առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտ ստացած ըլլալով իր պաշտօնի վաւերացման եպարքոսական պաշտօնագիրը՝ Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ, այս օրերս Բարձր Խորհրդին պիտի ներկայանայ:

Առաջնորդական Տեղապահը որ երէկ իրիկուն Գահիրէ պիտի վերադառնար, այս պատճառաւ յետաձգած է իր մեկնումը:

Մեզ հասած զրոյցի մը նայելով՝ Աղեքսանդրիոյ մէջ, անցեալ ամսու 12ին գաղթականաց ի նպաստ տրուած գիշերային հանդէսը կազմակերպող միջազգային յանձնախումբը կը դժկամակի եղեր Թաղական Խորհրդոյ յանձնել այդ ցայգահանդէսին հասցիլը որ 250 ոսկի կը հասնի: Այս դժկամակութիւնը առաջ ե-

կած է անվստահութենէ մը որ յանձնախումբին ներշնչուած է երրորդ անձի մը կողմէ:

Այս զրոյցը կը հրատարակենք ամենայն վերապահութեամբ և ուրախ պիտի ըլլանք եթէ նոյն ինքն Թաղական Խորհուրդը հերքում մը տայ անոր:

ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅՅԵՐԸ

Մշակ իր սեպտեմբեր 2/14ի թերթին ճակատը «կառավարութեան հայեցակէտը Հայոց շարժումներէ մասին» խորագրին տակ կը հրատարակէ Բեդրսպուրկէն Քալապաշ տօնական լրագրին ուղղուած հետեւեալ հեռագիրը.

Ռուսիոյ պաշտօնաթերթին մէջ տպագրուած է հետեւեալը. «Մամուլի մէջ ժամանակ առ ժամանակ երեւում են լուրեր այն մասին, թէ օսմանեան պետութեան սահմաններում երեւան են դաւլիս զանազան հայկական կոմիտէներ և շրջաններ որոնց վերագրուած է մտադրութիւն, անցեալ տարուան օրինակին հետեւելով, դիմել բռնութիւնների և իրանց ցեղակից խաղաղ ազգաբնակիւթիւնը զրգռել՝ անկարգութիւններ կատարելու: Յիշուի, չէ կարելի չը նկատել որ այդ տեղեկութիւնները մասամբ հաստատուում են դեռ նորերս թիւրք-պարսկական սահմանի վրայ տեղի ունեցած զինված ընդհարումներով՝ տեղական հայերի և քրդերի մէջ, նոյնպէս և այն յանցաւոր շարաստութիւններով ուրոնք տեղի ունեցան նոյն իսկ Թիւրքիայի մայրաքաղաքում և որոնց հեղինակները գրեթէ բացառապէս հայեր են և զլիսաւորապէս եկոր հայեր: Հարկ չը կայ ցոյց տալ թէ որքան անմիտ են այդ տեսակ գործողութիւնները, Հասարակական կարծիքը բարձրագոյն դատապարտեց զրանց, ոչ միայն այն չարիքների պատճառով որ հասցնում է մերձաւոր գոհներին, այլ և ի նկատի ունենալով այն անհիմն յուզմունքներն ու ցնորքները որոնք կարող են ծագել խաղաղ հոյ ազգաբնակիւթեան մէջ: Մեր կառավարութիւնը, իր կողմից, չէ թագրել իր կատարեալ հակակրօթիւնը դէպ ի հայկական ագտիայիան որ չը կարողացաւ ազգաբնակիւթեան որ և է օգուտ բերել, այլ ընդհակառակն ընդունակ է միայն աւելի վատացնել այն պայմանները որոնց ծանրութեան դէմ ագտիատաւորներն, ըստ երեւութին, իրաւունք են համարում բողոքել: Պէտք է յուսաւ որ հայ ազգաբնակիւթեան առողջամիտ մասը գործով օրինակ կը տայ, թէ ինչպէ՛ս պէտք է վերաբերվի. դէպ ի անցքերը, և ագտիայիայի դեկավարների վրա պէտք եղած ազդեցութիւնն անելով՝ նոր դժբաղդութիւններ չի առաջն կառնէ:»

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Նախարարներն ու անոնց իրաւասութեան տակ գտնուած պաշտօնէութիւնները որոնք ամառուան եղանակին համար Աղեքսանդրիա փոխադրուած էին, երկուշաբթի կամ հինգշաբթի Գահիրէ պիտի վերադառնան Բարձր Խորհրդէ եւս հաւանաբար հոկտեմբերի վերջը դայ:

—Հանրօգուտ շինութեանց նախարար Յակարի փաշա որ ընտանեօք Ֆրանսա ուղեւորած էր օգտփոխութեան համար, վերադարձաւ Մէսսաթըրիի վերջին շոգենաւով ուր կը գտնուէին նաեւ երմտական խորհրդական Սըր Էլլին Բալմըր, բանտերու վերատեսուչ Քօլս փաշա և Հարինկթըն պէյ՝ իրենց տիկիններով:

—Կալիուպի դէպքին առթիւ դատապարտուած հինգ արաբները Սուտան ղրկուեցան իրենց պատիժը կրելու:

—Անգլիական զրաւիչ բանակէն հեծեալ ջոկատ մը չորեքշաբթի առտու մեկնեցաւ Ապպասիյէէն դէպ ի Պառաժները ուր գիշե-

րեց: Երէկ ճամբայ ելաւ Շիպն էլ Քօմ երթալու: Այսօր Թանթա կերթայ ուր պիտի մնայ մէկ օր. հակամբերի 4ին Թէվֆիգիէ կը հասնի (նեղոսի ձախ եղբրքին վրայ գիւղ մը, Քաֆր Չայատի մօտ) ու գիշերն հոն կանցունէ. յետոյ յալիւփաթար պիտի այցելէ Տաւանհուր, Քաֆր Տաուար, Մուսթաֆա փաշա և Աղեքսանդրիա: Մինչեւ հոկտ. 20 այնտեղ մնալէ ետք, նոյն ճամբով Գահիրէ պիտի դառնայ, միեւնոյն դադարներով: Այս ղինուորական պտոյտ որոշուեցաւ Կալիուպի դէպքին հետեւանօք:

Արեւելեան երկաթուղիներու Հոկտեմբեր 1ի վիճակահանութեան մեծ պարգէր շահած է 916,944 րիւր:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքի երեսփոխանական ժողովը գումարուեցաւ այս հինգշաբթի օր, հաշտութեան նախաշաւիղ պայմանագիրը քննելու համար, և նիստին առաջին արգիւնքը եղաւ նախարարութեան տապալումը: Նախարարապետ Պ. Ռալլի այդ պայմանագրի ներկայացումէն ետք, տեսնելով ժողովականաց բուռն ընդդիմութիւնը ու քննադատութիւնները, վստահութեան քուէ առաջարկեց. նախարարութեան ի նպաստ տրուեցաւ 30 քուէ և հակառակ՝ 93: Քառասունները երեսփոխանք ձեռնպահ մնացին: Նախարարութիւնը հրաժարեցաւ:

Պ. Ռալլի, ինչպէս կը յիշուի, պաշտօնի անցած էր թուրքահայէն պատերազմի ամենէն հրատապ միջոցին, իբրեւ ընդդիմադիր կուսակցութեան պետ, երբ Պ. Տէլեանիսքաշուեցաւ թագաւորին հրաւիրանօք: Հինգ ամսուան պաշտօնավարութենէ մը ետք՝ ինք ու իրենները կը քաշուին խորհրդարանին քուէով, իրենց յաջորդներուն թողով շատ դժուարին ու փափուկ կացութիւն մը:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ

Աթէնք. 1 հոկտ. — Թագաւոր Պ. Չայիսիսին յանձնեց նոր նախարարութիւնը կազմելու պատճօնը: Տեխանիսի կուսակցութեան անդամներէն շատեր փախուցան:

Աթէնք. 2 հոկտ. — Լրագիրները կամբասաւնեն խորհրդարանը քի կուսակցական քայներ երկրին շահերէն վեր կը դասէ: Տագաւոր կը շարունակուի:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԼՍԱՐԱՆԸ

Ընթերցասիրաց ընկերութեան երրորդ շաբաթը տեղի պիտի ունենայ այս գիշեր, ժամ 9ին: Աստուարանն է Տիւր Կ. Նաւասարդեան որ իրեն նիւթ ընտրած է

«Հին եւ նոր ազգաց քաղաքակրթութիւնը»

Թէ՛ դասարի միջոցին եւ քե՛ստեւաբանութեան աւարտումէն ետք, երաժշտական հաստատութիւն պիտի նուազուի զաշնակի վրայ:

Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Տ.

Պատիւ ունիմ Ձեզ ծանուցանելու քե՛ս եգիպտական քղաքական հրապարակ, խառն դասարանաց դէմ, Մարաքիայի շէնֆին ներքեւ դեղարան մը հաստատւել եւ ուր դիմող յաճախորդները զոհացնելու համար որեւէ զոհողութիւն չեւ խնայած:

Ամեն անգամ որ իրենց վստահութեամբ պիտի պատուէ դեղարանս, հոն պիտի գտնուի անբասիր սպասարկութիւն մը, քաւմ դեղեր, եւ գիներու չափաւորութիւն:

Յուսարով որ Ձեր պատուարքեր յանձնարարութիւններով պիտի փաշտէիք իմ այս ձեռնարկ, կը խնդրեմ ընդունիք. Տ. . . յարգանքս հաւատարմ:

Թ. ԱԽԱԳԻՐԱՆ

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԱՄՈՒՍՆԱԹՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻՈՑ ՄԷՋ

Անգլիոյ գերագոյն ատենի զիւանապետը մանրամասն վիճակագիր մը հաղորդեր է լրագրութեան, ամուսնալուծմանց դատարանին կողմէ անցեալ տարի տրուած վճիռներու մասին: Նորութիւն մըն է այս բրիտանական բարբերուն համար, վստահի մինչեւ յարզ եղեռնական ու պատժական դատերու ինչպէս նաեւ անանկութեանց վերաբերող վիճակագիրները միայն կը հրատարակուէին:

Այդ պաշտօնագրին պարունակած է նաեւ չափերը տեղեկութիւնը կը վերաբերի՝ ամուսնալուծում պահանջող անձանց արուեստներուն դասակարգութեան: Գերագոյն ատենը 735 ամուսնալուծման վճիռ արտադրել է, որ վերջին տասը տարիներու միջոցին մեծագոյն թիւն է յ'Անգլիա, և 1886ին միայն քիչ մը աւելի բարձր էր անոնց թիւը, 746: Վերջին մէկ տարուան մէջ ապահարզան (divorce) ձեռք բերող ամուսններուն 15ը կառապան են, 12ը վաճառական, 38ը գրասենեկի պաշտօնեայ, 16ը բժիշկ, վիրաբոյժ և անանարոյժ, 30ը որմնագիր կամ ատաղձագործ, 21ը հանրային տուն բանեցողներ, 18ը զինուոր կամ նաւազ, 16ը ագարակապան, 12ը առեւտրական ուղեւոր, 11ը դերասան կամ նուագածու, 18ը երկրաչափ կամ ճարտարագէտ, 6ը ցամաքային կամ ծովային սպայ, 5ը նոտար, 4ը փաստաբան և 2ը խրմբագիր:

734 ամուսնալուծմանց 353ը էրիկներուն կողմէ խնդրուած են ու 220ը կիներուն կողմէ: Մնացեալները, երկուքին կողմէ միանգամայն: Այս 735 վճիռները 213 նիստ գրաւեր են ու 154,875 ֆրանք դատական ծախք պատճառած: Վիճակագրութեան մէկ կէտն եւս ոչ նուազ հետաքրքրական է. այն որ կը վերաբերի կենակցութեանց տեւողութեան՝ ապահարզանէն առաջ: 15 ամուսնալուծութիւն պահանջուած են էրիկներու կողմէ որոնք դեռ տարուան մը կարգուած էին և 28 ամուսնալուծութիւն՝ երկու տարիէ ի վեր կարգուածներու կողմէ: 69 դատ րապոյներ կան քսան կամ աւելի տարիէ հետէ ամուսնացած: միջին թիւը կը կազմէ տասը տարին:

Այս ապահարզաններէն դուրս, դատարանը 1035 բաժանման վճիռ արձակեր է:

Ա. Զ. Դ.

Տիկին Սոֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գաւիթ հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել հայ հասարակութեան որ պատրաստ է իր խնամքը ցուցնել իրեն պէտք ունեցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խրդնամիս աշխատութիւնը զինքը բաղաժիս առաջնաւ կարգ մանկաբարձերու կարգը կանգնեցնելու:

Իսկել Շուպրա, Չամաշիւր փողոց քիւ 12: Սր. կուսաբքի եւ հիմնադրութիւն օրերը առաւօտուն կը գրքնուի Սարաֆեան դեղատոմար ի Պէն-էլ-Սուրէն:

ՏՊԱՐԱՆ

“ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԱԵՁՈՒԻ ԵՐԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ

ՏՈՄՍԵՐ

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաբարձերու եւ տոմարներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ րազրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍՏԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.— Կանխավճար արժեթուղթերու վրայ.— Կտանձնէ յաճախողներու հաշոյն համար դանձումներ ընել Եգիպտոսի և արտասահմանի գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամաւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պուրաք փողոց Եգիպտական հեռագրատան դէմ Բէստազօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէքիյէ, հայկական պանդոկին քովընտրի կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն ղժուարահաճները գոհացնելու եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական գիններով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՍՏԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսպրէս	օմնիպ.	էքսպրէս	օմնիպիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3	կարգ
Գահիրէ	մեկ.	առտ. 4 45	առտ. —	առտ. 7 —	առտ. 8 15	առտ. 9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ. 12 35
Թանիս	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
		երեկոյ			երեկ.					
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
		երեկոյ			երեկոյ					
Աղէքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՍՏԱՆԳՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմնիպ. 1,2,3կգ.	կէս ուղ. 1,2,3կգ.	օմնիպ. 1,2,3կգ.	էքսպրէս 1 2 կգ.	խառն	օմնիպ. 1,2,3կգ.	էքսպրէս 1 2 կրգ.	օմնիպիւս 1 2 3 կարգ	
		առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Աղէքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանիթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
				երեկ.					—	
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա }	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		երեկոյ		
Ջակաղիկ }	ժամ.	1 34	8 54	Խամախիւս	»	1 20	7 5
	մեկ.	1 44	9 4				
			առտ.	Ջակաղիկ)	ժամ.	3 7	8 53
Խամախիւս	մեկ.	3 40	1 —	)	մեկ.	3 17	9 3
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	Պէնհա }	ժամ.	4 13	9 47
					մեկ.	4 17	9 4
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35